ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դավիթ Անդրանիկի Գրիգորյան

ՏԻՊԻԶԱՑՎԱԾ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ա.01.09 «Մաթեմատիկական կիբեռնետիկա և մաթեմատիկական տրամաբանություն» մասնագիտությամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Григорян Давит Андраникович

О РЕАЛИЗАЦИИ ТИПИЗИРОВАННЫХ ФУНКЦИОНАЛЬНЫХ ПРОГРАММ

А В Т О Р Е Ф Е Р А Т

диссертации на соискание ученой степени кандидата физико-математических наук по специальности 01.01.09 – “Математическая кибернетика и математическая логика”

ЕРЕВАН – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	ֆիզ.մաթ. գիտ. դոկտոր	Ս.Ա. Նիգիյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	ֆիզ.մաթ. գիտ. դոկտոր	Յ.Մ. Մովսիսյան
	ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու	Ա.Հ. Առաքելյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. հունիսի 12-ին, ժամը 16^{00}-ին, ԵՊՀ-ում գործող 044 ‹‹Մաթեմատիկական կիբեռնետիկա›› մասնագիտական խորհրդի նիստում հետևյալ հասցեով՝ 0025, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. ապրիլի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, ֆիզ.մաթ. գիտ. դոկտոր՝ Վ.Ժ. Դումանյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель:	доктор физ.мат. наук	С.А. Нигиян
Официальные оппоненты:	доктор физ.мат. наук	Ю.М. Мовсисян
	кандидат физ.мат. наук	А.Г. Аракелян

Ведущая организация: Институт проблем информатики и автоматизации НАН РА

Защита диссертации состоится 12-ого июня 2019г., в 16^{00} часов, на заседании специализированного совета 044 “Математическая кибернетика” действующего в ЕГУ, по адресу: 0025, Ереван, ул. А. Манукяна, 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 29-ого апреля 2019г.

Ученый секретарь специализированного
совета, доктор физ.мат. наук В.Ж. Думанян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Աշխատանքը նվիրված է ֆունկցիոնալ ծրագրավորման հիմունքներին: Հետազոտման առարկա են հանդիսանում տիպիզացված ֆունկցիոնալ ծրագրերը, իսկ հիմնական դիտարկվող խնդիրը՝ ծրագրի կողմից որոշվող ֆունկցիայի հաշվարկման ֆունդամենտալ խնդիրն է: Տիպիզացված ֆունկցիոնալ ծրագիրն իրենից ներկայացնում է հավասարումների համակարգ (անջատվող փոփոխականներով)՝ տիպիզացված λ-հաշվի մոնոտոն մոդելում [1,2]: Ծրագրի ցանկացած հավասարում ունի $F = t$ տեսքը, որտեղ F-ը փոփոխական է, t-ն՝ տիպիզացված λ-թերմ, որի տիպը համընկնում է F փոփոխականի տիպի հետ [1,3] : Մեր կողմից դիտարկվող տիպիզացված ֆունկցիոնալ ծրագրերը օգտագործում են կամայական կարգի փոփոխականներ և հաստատուններ, որոնց կարգը ≤ 1, որտեղ 1 կարգի հաստատունները խիստ հաշվարկելի, մոնոտոն արգումենտների անորոշ արժեքներով ֆունկցիաներ են [4]: Տիպիզացված ֆունկցիոնալ ծրագրի հիմնական սեմանտիկան հանդիսանում է արգումենտների անորոշ արժեքներով ֆունկցիա, որը նրա փոքրագույն լուծման գլխավոր կոմպոնենտն է [1]: Ծրագրի կողմից որոշվող ֆունկցիայի հաշվարկը՝ կոնկրետ մուտքային տվյալների դեպքում, իրականացնում է ինտերպրետացիայի ալգորիթմը: Ինտերպրետացիայի ալգորիթմները, որոնք հիմնված են փոփոխականների, որոշ ազատ մուտքերի փոխարեն, ծրագրի հավասարումների աջ մասերի տեղադրման, միաքայլ β-ռեդուկցիայի և միաքայլ δ-ռեդուկցիայի գործողությունների վրա, անհակասելի են այն իմաստով, որ, եթե ալգորիթմը կանգ է առնում, ապա նրա կողմից հաշվարկվող արժեքը համընկնում է ծրագրի կողմից որոշվող ֆունկցիայի արժեքի հետ [5]: Եթե որոշվող ֆունկցիայի արժեքը անորոշ է, ապա ինտերպրետացիայի ալգորիթմը կամ կանգ է առնում անորոշ արժեքով, կամ աշխատում է անվերջ: β-ռեդուկցիայի գաղափարը հանդիսանում է դասական գաղափար և նույնն է լեզվի կամայական ինտերպրետացիայի դեպքում, δ-ռեդուկցիայի գաղափարը կախված է ներդրված ֆունկցիաների բազմությունից և ֆունցիոնալ ծրագրավորման լեզվի կոնկրետ իրականացումից:

[6]Աշխատանքում դիտարկվել են տիպիզացված ֆունկցիոնալ ծրագրեր, որոնք օգտագործում են փոփոխականներ և հաստատուններ, որոնց կարգը ≤ 1, և չեն օգտագործում λ-աբստրակցիա: Հետազոտվել են այդպիսի ծրագրերի հաշվարկման

1 *Nigiyan S.A.* Functional Languages. // Programming and Computer Software, 1992, v. 17, № 5, p. 290-297.

2 *Barendregt H.P.* The lambda calculus. Its syntax and semantics. North-Holland Publishing Company, 1981.

3 *Nigiyan S.A.* On Interpretation of Functional Programming Languages. // Programming and Computer Software, 1993, v. 19, № 2, p. 71-78.

4 *Nigiyan S.A.* On Non-classical Theory of Computability. // Proceedings of the YSU. Physical and Mathematical Sciences, 2015, № 1, p. 52–60.

5 Акопян Р.Ю. О процедурных семантиках строго типизированных функциональных программ. // Ученые записки ЕГУ, 2008, № 3, p. 59-69.

6 *Manna Z.* Mathematical theory of computation. McGraw Hill Book Co, 1974.

կանոններ, որոնք օգտագործում են տեղադրում և թերմերի պարզեցում, կապված ներդրված ֆունկցիաների հետ (δ-ռեդուկցիա), սակայն δ-ռեդուկցիայի գաղափարը չի եղել ֆորմալիզացված:

δ-ռեդուկցիայի գաղափարն առաջին անգամ ֆորմալիզացվել է [1,2] աշխատանքներում: Ներմուծվել և հետազոտվել է, այսպես կոչված, բնական δ-ռեդուկցիայի գաղափարը, գտնվել է անհրաժեշտ և բավարար պայման, որին պետք է բավարարի բնական δ-ռեդուկցիայի գաղափարը, որպեսզի ցանկացած տիպիզացված λ-թերմի βδ-նորմալ ձևը լինի միակը [2]:

[3]Աշխատանքում սահմանվել է δ-ռեդուկցիայի ավելի լայն գաղափար, այսպես կոչված, կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափար (բնական δ-ռեդուկցիայի գաղափարը հանդիսանում է կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի մասնավոր դեպք), որը δ-ռեդուկցիայի հենց այն գաղափարն է, որն օգտագործվում է իրական ֆունկցիոնալ ծրագրավորման լեզուներ իրականացնելիս: [3]Աշխատանքում ցույց է տրվել, որ ցանկացած խիստ հաշվարկելի, մոնոտոն, արգումենտների անորոշ արժեքներով ֆունկցիաների ռեկուրսիվ բազմության համար գոյություն ունի կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափար:

Բնականաբար հարց է առաջանում, թե ինչպիսի պայմանների պետք է բավարարի կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարը, որպեսզի ցանկացած տիպիզացված λ-թերմի βδ-նորմալ ձևը լինի միակը:

Մեր կողմից նշվել է, որ, եթե ծրագրի կողմից որոշվող ֆունկցիան որոշված չէ արգումենտների որոշ ֆիքսված արժեքների դեպքում, ապա ինտերպրետացիայի ալգորիթմը կամ կանգ է առնում անորոշ արժեքով, կամ աշխատում է անվերջ: Բնականաբար առաջանում է հարց ինտերպրետացիայի ալգորիթմների δ-ռեդուկցիայի գաղափարից ըստ անորոշ արժեքի կախվածության վերաբերյալ: Բնականաբար, նաև, առաջանում է հարց ինտերպրետացիայի ալգորիթմների ըստ անորոշ արժեքի համեմատելիության վերաբերյալ:

Մեր կողմից դիտարկվում են հայտնի յոթ ինտերպրետացիայի ալգորիթմները՝ *FS* (լրիվ տեղադրման), *PES* (զուգահեռ արտաքին տեղադրման), *LES* (ձախ արտաքին տեղադրման), *PIS* (զուգահեռ ներքին տեղադրման), *LIS* (ձախ ներքին տեղադրման), *PAS* (պասիվ), *ACT* (ակտիվ), և ուսումնասիրվում դրված խնդիրները այս ալգորիթմների համար:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Այս աշխատանքի հիմնական նպատակն ու խնդիրները հետևյալն են.

1. Պարզել, թե ինչպիսին պետք է լինի կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարը, որպեսզի ցանկացած տիպիզացված λ-թերմի βδ-նորմալ ձևը լինի միակը:

---

[1] *Budaghyan L.E.* Formalizing the Notion of δ-Reduction in Monotonic Models of Typed λ-Calculus. // Algebra, Geometry and Their Applications, vol. 1, p. 48-57, 2002.

[2] *Budaghyan L.E.* A Necessary and Sufficient Condition of Completeness of Computation Rule for Strong Typed Functional Programs. Proceedings of the Conference of CSIT, 2005, p. 16-19.

[3] *Nigiyan S.A.*, Khondkaryan T.V. On Canonical Notion of δ-reduction and on Translation of Typed λ-terms Into Untyped λ-terms. // Proceedings of the YSU. Physical and Mathematical Sciences, 2017, No 1, p. 46-52

2. Ուսումնասիրել ինտերպրետացիայի FS, PES, LES, PIS, LIS, PAS, ACT ալգորիթմների կախվածությունը կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարից ըստ անորոշ արժեքի:

3. Ուսումնասիրել ինտերպրետացիայի FS, PES, LES, PIS, LIS, PAS, ACT ալգորիթմների համեմատելիությունը ըստ անորոշ արժեքի:

Հետազոտման մեթոդները: Աշխատանքում օգտագործված հետազոտության մեթոդները ներառում են ֆունկցիոնալ ծրագրավորման, տիպիզացված λ-հաշվի, ալգորիթմների տեսության, հանրահաշվի մեթոդները:

Արդյունքների նորությունը: Աշխատանքում կատարված հետազոտությունների արդյունքում ստացվել են հետևյալ հիմնական արդյունքները.

1. Ցույց է տրվել, որ հիմնական կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի դեպքում $\beta\delta$-ռեդուկցիայի գաղափարը օժտված է Չորչ-Ռոսսերի հատկությամբ, որից էլ բխում է, որ, հիմնական կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի դեպքում, ցանկացած տիպիզացված λ-թերմի $\beta\delta$-նորմալ ձևը միակն է:

2. Կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի համար, ներմուծվել է, այսպես կոչված, տեղադրելիության և ժառանգականության հատկությունը (ՏԺ-հատկությունը) և ցույց է տրվել, որ այն հանդիսանում է անհրաժեշտ և բավարար պայման՝ կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի դեպքում, տիպիզացված λ-թերմերի $\beta\delta$-նորմալ ձևի միակության համար:

3. Ցույց է տրվել, որ ինտերպրետացիայի FS, PES, LES, PIS, LIS, PAS, ACT ալգորիթմները կախված են կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարից ըստ անորոշ արժեքի:

4. Ցույց է տրվել, որ ինտերպրետացիայի FS, PES, LES, PIS, LIS, PAS, ACT ալգորիթմները զույգ առ զույգ անհամեմատելի են ըստ անորոշ արժեքի:

Տեսական և կիրառական նշանակությունը: Աշխատանքում մշակված հետազոտության մեթոդները և ստացված արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Մասնավորապես, ֆունկցիոնալ ծրագրավորման նոր համակարգերի ստեղծման և արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերի ուսումնասիրության, արդյունավետության բարձրացման և այլ խնդիրների լուծման համար:

Ստացված արդյունքների ապրոբացիան: Ատենախոսության հիմնական արդյունքները զեկուցվել են ԵՊՀ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի սեմինարներում, ԵՊՀ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ընդհանուր սեմինարում, Մխիթար Ջրբաշյանի 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում (Երևան, Հայաստան, հոկտեմբեր 22-24, 2018): Ատենախոսության հիմնական արդյունքներն ընդգրկված են հրատարակված վեց աշխատանքներում:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից (37 անուն): Ատենախոսության ծավալը 91 էջ է:

Ներածությունում նկարագրվում է ատենախոսության հետազոտության հիմնական խնդիրներն ու նպատակը, հիմնավորվում է թեմայի արդիականությունը և նորությունը: Համառոտ կերպով ներկայացվում է ստացված արդյունքները, նրանց գիտական և կիրառական նշանակությունը:

Գլուխ 1-ում տրվում են անհրաժեշտ սահմանումները և արդյունքները, որոնք վերցված են [1,2,3,4,5] աշխատություններից: Առաջին գլուխը կազմված է երեք բաժնից:

1.1 բաժնում ներմուծվում են տիպի, տիպիզացված λ-թերմի, β-ռեդուկցիայի, կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարները:

Դիցուք M-ը մասնակի կարգավորված բազմություն է և այն պարունակում է անորոշ արժեքին համապատասխանող $\perp$ էլեմենտը, որը M-ի փոքրագույն էլեմենտն է և M բազմության ցանկացած էլեմենտ համեմատելի է միայն ինքն իր և $\perp$-ի հետ:

Սահմանում 1.1.1: (Տիպի սահմանում). Սահմանենք տիպերի $Types$ բազմությունը հետևյալ կերպ.

1. $M \in Types$,
2. եթե $\beta, \alpha_1, \ldots, \alpha_k \in Types$ $(k > 0)$, ապա $\alpha_1 \times \ldots \times \alpha_k$-ից β բոլոր մոնոտոն արտապատկերումների բազմությունը (նշ. $[\alpha_1 \times \ldots \times \alpha_k \to \beta]$) պատկանում է $Types$:

Սահմանում 1.1.2: (Թերմի սահմանում). V_α-ով նշանակենք α տիպի փոփոխականների հաշվելի բազմությունը: Բոլոր փոփոխականների բազմությունը նշանակենք V-ով՝ $V = \bigcup_{\alpha \in Types} V_\alpha$: Թերմերի բազմությունը կնշանակենք $\Lambda = \bigcup_{\alpha \in Types} \Lambda_\alpha$, որտեղ Λ_α-ն α տիպի թերմերի բազմությունն է, որը սահմանվում է հետևյալ կերպ.

1. եթե $c \in \alpha, \alpha \in Types$, ապա $c \in \Lambda_\alpha$,
2. եթե $x \in V_\alpha, \alpha \in Types$, ապա $x \in \Lambda_\alpha$,
3. եթե $t \in \Lambda_{[\alpha_1 \times \ldots \times \alpha_k \to \beta]}, t_i \in \Lambda_{\alpha_i}, \beta, \alpha_i \in Types, i = 1, \ldots, k$ $(k > 0)$, ապա $t(t_1, \ldots, t_k) \in \Lambda_\beta$ (t-ն կանվանենք ապլիկատոր, իսկ $t_1, \ldots, t_k$-ն՝ ապլիկատորի ազդեցության տիրույթ),
4. եթե $t \in \Lambda_\beta, x_i \in V_{\alpha_i}, \beta, \alpha_i \in Types, i \neq j \Rightarrow x_i \neq x_j, i, j = 1, \ldots, k$ $(k > 0)$, ապա $\lambda x_1 \ldots x_k[t] \in \Lambda_{[\alpha_1 \times \ldots \times \alpha_k \to \beta]}$ ($\lambda x_1 \ldots x_k$-ն կանվանենք աբստրակտոր, իսկ t-ն՝ աբստրակտորի ազդեցության տիրույթ):

Դիցուք $\varphi : \mathrm{M}^k \to \mathrm{M}, \mathrm{k} \geq 1$: Այդ դեպքում φ արտապատկերումը կանվանենք արգումենտի անորոշ արժեքներով ֆունկցիա:

---

[1] *Nigiyan S.A.* Functional Languages. // Programming and Computer Software, 1992, v. 17, No 5, p. 290-297.
[2] *Nigiyan S.A.* On Non-Classical Theory of Computability. // Proceedings of the YSU. Physical and Mathematical Sciences, 2015, No 1, p. 52-60.
[3] *Nigiyan S.A.*, Khondkaryan T.V. On Canonical Notion of δ-reduction and on Translation of Typed λ-terms Into Untyped λ-terms. // Proceedings of the YSU. Physical and Mathematical Sciences, 2017, No 1, p. 46-52
[4] *Barendregt H.P.* The lambda calculus. Its syntax and semantics. North-Holland Publishing Company, 1981.
[5] *Budaghyan L.E.* Formalizing the Notion of δ-reduction in Monotonic Models of Typed λ-calculus. // Algebra, Geometry and Their Applications, vol. 1, YSU press, p. 48-57.

$\varphi: \mathrm{M}^k \to \mathrm{M}, \mathrm{k} \geq 1$ ֆունկցիան կոչվում է հաշվարկելի, եթե գոյություն ունի ալգորիթմ այնպիսին, որ կամայական $m_1, \dots, m_k \in \mathrm{M}$ համար կանգ է առնում $\varphi(m_1, \dots, m_k)$ արժեքով, եթե $\varphi(m_1, \dots, m_k) \neq \perp$, և կանգ է առնում $\perp$ արժեքով կամ աշխատում է անվերջ, եթե $\varphi(m_1, \dots, m_k) = \perp$:

$\varphi: \mathrm{M}^k \to \mathrm{M}, \mathrm{k} \geq 1$ ֆունկցիան կոչվում է խիստ հաշվարկելի, եթե գոյություն ունի ալգորիթմ այնպիսին, որը կանգ է առնում $\varphi(m_1, \dots, m_k)$ արժեքով բոլոր $m_1, \dots, m_k \in \mathrm{M}$ համար:

$\varphi: M^k \to \mathrm{M}$, $\mathrm{k} \geq 1$ ֆունկցիան կոչվում է բնական ընդլայնված, եթե ցանկացած $m_1, \dots, m_k \in M$ համար տեղի ունի հետևյալը. եթե $m_i = \perp$ որևէ i-ի համար, որտեղ $1 \leq i \leq k$, ապա $\varphi(m_1, \dots, m_k) = \perp$:

Այսուհետ կենթադրենք, որ M-ը ռեկուրսիվ բազմություն է և դիտարկվող թերմերը օգտագործում են կամայական կարգի փոփոխականներ և հաստատուններ, որոնց կարգը ≤ 1, որտեղ 1 կարգի հաստատունները խիստ հաշվարկելի, մոնոտոն արգումենտների անորոշ արժեքներով ֆունկցիաներ են:

Դիցուք $t \in \Lambda$ և $x \in V$: Այդ դեպքում x փոփոխականի ֆիքսած մուտքը t թերմում կանվանենք կապված, եթե այն կամ պատկանում է որևէ աբստրակտորի, կամ գտնվում է x փոփոխականն օգտագործող աբստրակտորի ազդեցության տիրույթում: Հակառակ դեպքում՝ x փոփոխականի ֆիքսած մուտքը t թերմում կանվանենք ազատ: Կասենք, որ x փոփոխականը t թերմում ազատ է, եթե այն ունի առնվազն մեկ ազատ մուտք: t թերմի ազատ փոփոխականների բազմությունը կնշանակենք $FV(t)$-ով:

$\sigma = \{t_1/x_1, \dots, t_n/x_n\}$ բազմությունը կանվանենք տեղադրում, որտեղ $x_i \in V_{\alpha_i}, t_i \in \Lambda_i, \alpha_i \in Types, i \neq j \Rightarrow x_i \neq x_j, i, j = 1, \dots, n, n \geq 0$:

Դիցուք $t \in \Lambda$ և $\sigma = \{t_1/x_1, \dots, t_n/x_n\}$-ն որևէ տեղադրում է: Այդ դեպքում $t\sigma$-ով կնշանակենք այն թերմը, որը ստացվում է t թերմում $x_1, \dots, x_n$ փոփոխականների բոլոր ազատ մուտքերը միաժամանակ փոխարինելով համապատասխանաբար $t_1, \dots, t_n$ թերմերով և կասենք, որ այդ թերմը ստացվել է t թերմից σ տեղադրման կիրառման արդյունքում: Կասենք, որ σ տեղադրման կիրառումը t թերմին թույլատրելի է, եթե $t_1, \dots, t_n$ թերմերի փոփոխականների ոչ մի ազատ մուտք ստացված $t\sigma$ թերմում չի կապվում:

Այսուհետ կդիտարկենք միայն տեղադրումների թույլատրելի կիրառումներ:

Կասենք, որ $t_1, t_2 \in \Lambda$ թերմերը կոնգրուենտ են (կնշանակենք $t_1 \equiv t_2$), եթե t_2 թերմը ստացվում է t_1 թերմից $\mathrm{n} \geq 0$ անգամ փոփոխականի վերանվանման միջոցով:

Այսուհետ կոնգրուենտ թերմերն իրարից չենք տարբերի:

Դիցուք τ_1, τ_2 -ը ենթաթերմերի ֆիքսած մուտքեր են t թերմում: Կասենք, որ այդ մուտքերը հատվող են, եթե τ_1 ենթաթերմի ֆիքսած մուտքը գտնվում է τ_2 ենթաթերմի ֆիքսած մուտքում, կամ τ_2 ենթաթերմի ֆիքսած մուտքը գտնվում է τ_1 ենթաթերմի ֆիքսած մուտքում: t թերմում իրար հետ զույգ առ զույգ չհատվող $\tau_1, \dots, \tau_k$ ենթաթերմերի մուտքերը ֆիքսելու համար կօգտվենք $t_{\tau_1, \dots, \tau_k}$ նշանակումից, որտեղ $t \in \Lambda, \tau_i \in \Lambda_{\alpha_i}, \alpha_i \in Types, i = 1, \dots, k, k \geq 1$, իսկ $t_{\tau'_1, \dots, \tau'_k}$-ով կնշանակենք թերմը, որը ստացվում է $t_{\tau_1,\dots,\tau_k}$ թերմից $\tau_1, \dots, \tau_k$ ենթաթերմերի ֆիքսած մուտքերը փոխարինելով համապատասխանաբար $\tau'_1, \dots, \tau'_k$ թերմերով, որտեղ $\tau'_i \in \Lambda_{\alpha_i}$:

Դիցուք $t \in \Lambda$, $FV(t) \subset \{y_1, \dots, y_n\}$, $y_i \in V_{\beta_i}$, $\bar{y}_0 = \langle y_1^0, \dots, y_n^0 \rangle$, $y_i^0 \in \beta_i$, $\beta_i \in Types$, $i = 1, \dots, n$ $(n \geq 0)$: Սահմանենք t թերմի արժեքը փոփոխականների $\bar{y}_0$ արժեքների համար, որը կնշանակենք $Val_{\bar{y}_0}(t)$:

1. եթե $t \equiv c, c \in \alpha, \alpha \in Types$, ապա $Val_{\bar{y}_0}(t) = c$,
2. եթե $t \equiv x$, որտեղ $x \in V_{\alpha_i}, x \equiv y_i, (1 \leq i \leq n)$, ապա $Val_{\bar{y}_0}(t) = y_i^0$,
3. եթե $t \equiv \tau(t_1, \dots, t_k) \in \Lambda_\beta$, $\tau \in \Lambda_{[\alpha_1 \times \dots \times \alpha_k \to \beta]}$, $t_i \in \Lambda_{\alpha_i}, \alpha_i \in Types, i = 1, \dots, k, k \geq 1$, ապա $Val_{\bar{y}_0}\big(\tau(t_1, \dots, t_k)\big) = Val_{\bar{y}_0}(\tau)\Big(Val_{\bar{y}_0}(t_1), \dots, Val_{\bar{y}_0}(t_k)\Big)$,
4. եթե $t \equiv \lambda x_1 \dots x_k[\tau] \in \Lambda_\alpha$, որտեղ $\alpha = [\alpha_1 \times \dots \times \alpha_k \to \beta], \tau \in \Lambda_\beta, x_i \in V_{\alpha_i}$, $\beta, \alpha_i \in Types, i = 1, \dots, k, k \geq 1$, ապա $Val_{\bar{y}_0}(\lambda x_i \dots x_k[\tau]) \in [\alpha_1 \times \dots \times \alpha_k \to \beta]$, և ցանկացած $\bar{x}_0 = \langle x_1^0, \dots, x_k^0 \rangle$, $x_j^0 \in \alpha_i$, $j = 1, \dots, k$ համար ունենք հետևյալը. $Val_{\bar{y}_0}(\lambda x_1 \dots x_k[\tau])(\bar{x}_0) = Val_{\bar{x}_0, \bar{y}'_0}(\tau)$, որտեղ $FV(\lambda x_1 \dots x_k[\tau]) = \{y_{i_1}, \dots, y_{i_s}\}, \bar{y}'_0 = \langle y_{i_1}^0, \dots, y_{i_s}^0 \rangle$, $0 \leq s \leq n$, $\bar{x}_0, \bar{y}'_0 = \langle x_1^0, \dots, x_k^0, y_{i_1}^0, \dots, y_{i_m}^0 \rangle$:

Դիցուք t_1, t_2-ը թերմեր են և $FV(t_1) \cup FV(t_1) = \{y_1, \dots, y_n\}$, $y_i \in V_{\alpha_i}$, $\alpha_i \in Types$, $i = 1, \dots, n, n \geq 0$: t_1, t_2 թերմերը կանվանենք համարժեք $(t_1 \sim t_2)$, եթե ցանկացած $\bar{y}_0 = \langle y_1^0, \dots, y_n^0 \rangle$-ի համար, որտեղ $y_i^0 \in \alpha_i, i = 1, \dots, n$, տեղի ունի հետևյալը. $Val_{\bar{y}_0}(t_1) = Val_{\bar{y}_0}(t_2)$:

Սահմանում 1.1.3: β-ռեդուկցիայի գաղափար կանվանենք զույգերի հետևյալ բազմությունը.

$$\beta = \{(\lambda x_1 \dots x_k[\tau](t_1, \dots, t_k), \tau\{t_1/x_1, \dots, t_k/x_k\}) | \\ x_i \in V_{\alpha_i}, t_i \in \Lambda_{\alpha_i}, \tau \in \Lambda, \alpha_i \in Types, i = 1, \dots, k, k \geq 1\},$$

որտեղ $\lambda x_1 \dots x_k[\tau](t_1, \dots, t_k)$ թերմը կանվանենք β-ռեդեքս, իսկ $\tau\{t_1/x_1, \dots, t_k/x_k\}$ թերմը՝ նրա փաթեթ:

Կասենք, որ t' թերմը ստացվում է t թերմից միաքայլ β-ռեդուկցիայի միջոցով և կնշանակենք $t \to_\beta t'$, եթե $t \equiv t_\tau, t' \equiv t_{\tau'}$, որտեղ τ-ն β-ռեդեքս է, իսկ τ'-ը՝ նրա փաթեթը: Կասենք, որ t' թերմը ստացվում է t թերմից β-ռեդուկցիայի միջոցով և կնշանակենք $t \to\to_\beta t'$, եթե կամ $t \equiv t'$, կամ գոյություն ունի թերմերի վերջավոր հաջորդականություն $t_1, \dots, t_k, k \geq 0$ այնպիսին, որ $t \to_\beta t_1 \to_\beta \dots \to_\beta t_k \to_\beta t'$:

Սահմանում 1.1.4: δ-ռեդեքսը ունի $f(t_1, \dots, t_k)$ տեսքը, որտեղ $f \in [M^k \to M]$, $t_i \in \Lambda_M$, $i = 1, \dots, k, k \geq 1$: $f(t_1, \dots, t_k)$ δ-ռեդեքսի փաթեթը կամ $m \in M$ թերմն է և այդ դեպքում $f(t_1, \dots, t_k) \sim m$, կամ էլ $t_j (1 \leq j \leq k)$ ենթաթերմը և այդ դեպքում $f(t_1, \dots, t_k) \sim t_j$: (τ, τ') զույգերի բազմությունը, որտեղ τ-ն δ-ռեդեքս է, իսկ τ'-ը՝ նրա փաթեթը, կանվանենք δ-ռեդուկցիայի գաղափար:

Կասենք, որ t' թերմը ստացվում է t թերմից միաքայլ δ-ռեդուկցիայի միջոցով և կնշանակենք $t \to_\delta t'$, եթե $t \equiv t_\tau, t' \equiv t_{\tau'}$, որտեղ τ-ն δ-ռեդեքս է, իսկ τ'-ը՝ նրա փաթեթը: Կասենք, որ t' թերմը ստացվում է t թերմից δ-ռեդուկցիայի միջոցով և կնշանակենք $t \to\to_\delta t'$, եթե կամ $t \equiv t'$, կամ գոյություն ունի թերմերի վերջավոր հաջորդականություն $t_1, \dots, t_k, k \geq 0$ այնպիսին, որ $t \to_\delta t_1 \to_\delta \dots \to_\delta t_k \to_\delta t'$:

Կասենք, որ τ թերմը $\beta\delta$-ռեդեքս է, եթե այն կամ β-ռեդեքս է, կամ δ-ռեդեքս է: Կասենք, որ t' թերմը ստացվում է t թերմից միաքայլ $\beta\delta$-ռեդուկցիայի միջոցով և կնշանակենք $t \to t'$, եթե կամ $t \to_\beta t'$, կամ $t \to_\delta t'$: Կասենք, որ t' թերմը ստացվում է t թերմից $\beta\delta$-ռեդուկցիայի միջոցով և կնշանակենք $t \to\to t'$, եթե կամ $t \equiv t'$, կամ գոյություն ունի թերմերի վերջավոր հաջորդականություն $t_1, \dots, t_k, k \geq 0$ այնպիսին, որ $t \to t_1 \to \dots \to t_k \to t'$:

t թերմը կանվանենք β-նորմալ ձև, եթե նրանում չկա ենթաթերմ, որը β-ռեդեքս է: Բոլոր β-նորմալ ձևերի բազմությունը նշանակենք $\beta\text{-}NF$: t թերմը կանվանենք նորմալ ձև, եթե նրանում չկա ենթաթերմ, որը $\beta\delta$-ռեդեքս է: Բոլոր նորմալ ձևերի բազմությունը նշանակենք NF:

Կասենք, որ δ-ռեդուկցիայի գաղափարը էֆեկտիվ է, եթե գոյություն ունի ալգորիթմ այնպիսին, որ կամայական $f(t_1, \dots, t_k)$ թերմի համար, որտեղ $f \in [M^k \to M]$, $t_i \in \Lambda_M, i = 1, \dots, k, k \geq 1$, վերադարձնում է այդ թերմի փաթեթը, եթե այն δ-ռեդեքս է և կանգ է առնում "ոչ" պատասխանով՝ հակառակ դեպքում: Կասենք, որ δ-ն միարժեք δ-ռեդուկցիայի գաղափար է, եթե տեղի ունի հետևյալը. $(\tau, \tau'), (\tau, \tau'') \in \delta \Rightarrow \tau' \equiv \tau''$, որտեղ $\tau, \tau', \tau'' \in \Lambda_M$:

Սահմանում 1.1.5: Էֆեկտիվ, միարժեք δ-ռեդուկցիայի գաղափարը կանվանենք կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափար, եթե.

1. $t \in \beta\text{-}NF, t \sim m, m \in M\backslash\{\perp\} \Rightarrow t \to\to_\delta m,$
2. $t \in \beta\text{-}NF, FV(t) = \emptyset, t \sim \perp \Rightarrow t \to\to_\delta \perp$:

1.2 բաժնում սահմանվում են տիպիզացված ֆունկցիոնալ ծրագրերը:

Դիտարկենք հետևյալ P հավասարումների համակարգը.

$$P \begin{cases} F_1 = t_1 \\ \quad \dots \\ F_n = t_n, \end{cases} \qquad (1)$$

որտեղ $F_i \in V_{\alpha_i}, i \neq j \Rightarrow F_i \not\equiv F_j, t_i \in \Lambda_{\alpha_i}, FV(t_i) \subseteq \{F_1, \dots, F_n\}, \alpha_i \in Types, i, j = 1, \dots, n, n \geq 1, k \geq 1$:

Սահմանում 1.2.1. Դիտարկենք հավասարումների (1) համակարգին համապատասխանող հետևյալ $\Psi_P: \alpha_1 \times \dots \times \alpha_n \to \alpha_1 \times \dots \times \alpha_n$ արտապատկերումը, որը սահմանվում է հետևյալ կերպ. եթե $\bar{g} = \langle g_1, \dots, g_n \rangle$, որտեղ $g_i \in \alpha_i, i = 1, \dots, n$, ապա $\Psi_P(\bar{g}) = \left(Val_{\bar{g}}(t_1), \dots, Val_{\bar{g}}(t_n)\right)$: Կասենք, որ $\bar{g} \in \alpha_1 \times \dots \times \alpha_n$ հանդիսանում է (1) հավասարումների համակարգի լուծում, եթե $\Psi_P(\bar{g}) = \bar{g}$, այսինքն՝ $\left(Val_{\bar{g}}(t_1), \dots, Val_{\bar{g}}(t_n)\right) = (g_1, \dots, g_n)$:

Թեորեմ 1.2.1: (1) տեսքի ցանկացած հավասարումների համակարգ ունի փոքրագույն լուծում:

Թեորեմ 1.2.1-ի ապացույցը բխում է [1] աշխատությունից :

Սահմանում 1.2.2: Հավասարումների (1) համակարգը կանվանենք

[1] *Nigiyan S.A.* Functional Languages. Programming and Computer Software, 1992, v. 17, No 5, p. 290-297.

տիպիզացված ֆունկցիոնալ ծրագիր, եթե $F_1 \in V_{[M^k \to M]}, k \geq 1$: $F_1 = t_1$ հավասարումը կոչվում է P ծրագրի գլխավոր հավասարում, իսկ $f_P = (\bar{f})_1$-ը՝ ծրագրի անշարժ կետի սեմանտիկա (հիմնական սեմանտիկա), որտեղ $\bar{f}$-ը ծրագրի փոքրագույն լուծումն է, իսկ $(\bar{f})_1$-ը՝ $\bar{f}$-ի առաջին կոմպոնենտը:

Այսուհետ տիպիզացված ֆունկցիոնալ ծրագիրը կանվանենք ուղղակի ծրագիր:

Դիցուք P-ն (1) տեսքի ծրագիր է և f_P-ն նրա անշարժ կետի սեմանտիկան է: Այդ դեպքում անշարժ կետի սեմանտիկային համապատասխանեցնենք $Fix(P)$ բազմություն, որը կսահմանենք հետևյալ կերպ.

$Fix(P) = \{(m_1, \dots, m_k, m) | \ f_P(m_1, \dots, m_k) = m$, որտեղ $m_1, \dots, m_k, m \in M, k \geq 1\}$:

1.3 բաժնում տրվում է ինտերպրետացիայի ալգորիթմի գաղափարը և ձևակերպվում անհակասելիության մասին թեորեմը:

Ֆիքսենք կանոնիկ δ-ռեդուկցիայի ինչ-որ գաղափար և մտցնենք ինտերպրետացիայի A ալգորիթմի սահմանումը:

Սահմանում 1.3.1: Ինտերպրետացիայի A ալգորիթմը կիրառվում է (1) տեսքի P ծրագրի և $F_1(m_1, \dots, m_k)$ թերմի վրա, որտեղ $m_i \in M, i = 1, \dots, k, k > 0$, կամ կանգ է առնում $m \in M$ պատասխանով, կամ աշխատում է անվերջ: Ինտերպրետացիայի A ալգորիթմը օգտագործում է հետևյալ 3 գործողությունները.

1. $F_1, \dots, F_n$ փոփոխականների որոշ ազատ մուտքերի փոխարինում համապատասխանաբար $t_1, \dots, t_n$ թերմերով,
2. միաքայլ β-ռեդուկցիա,
3. միաքայլ δ-ռեդուկցիա:

Սահմանում 1.3.2: Դիցուք A-ն ինտերպրետացիայի որևէ ալգորիթմ է և P-ն (1) տեսքի ծրագիր: Ինտերպրետացիայի A ալգորիթմի վրա հիմնված պրոցեդուրային սեմանտիկային համապատասխանող $Proc_A(P)$ բազմությունը սահմանենք հետևյալ կերպ.

$Proc_A(P) = \{(m_1, \dots, m_k, m) | \ A$ ալգորիթմը P-ի և $F_1(m_1, \dots, m_k)$-ի վրա կանգ է առնում m պատասխանով, որտեղ $m_1, \dots, m_k, m \in M, k \geq 1\}$:

Սահմանում 1.3.3: Կասենք, որ ինտերպրետացիայի A ալգորիթմը անհակասելի է, եթե ցանկացած կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի և ցանկացած P ծրագրի համար տեղի ունի հետևյալը. $Proc_A(P) \subset Fix(P)$:

Թեորեմ 1.3.1: Ինտերպրետացիայի ցանկացած ալգորիթմ անհակասելի է:

Թեորեմ 1.3.1-ի ապացույցը բխում է [1] աշխատությունից:

Գլուխ 2-ում ուսումնասիրվում է կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի դեպքում βδ-ռեդուկցիայի գաղափարը: Երկրորդ գլուխը բաղկացած է երեք բաժնից:

2.1 բաժնում ուսումնասիրվում է հիմնական կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի դեպքում տիպիզացված λ-թերմի βδ-նորմալ ձևի միակությունը:

Սահմանում 2.1.1: Դիցուք C-ն խիստ հաշվարկելի, մոնոտոն արգումենտների անորոշ արժեքներով ֆունկցիաների ռեկուրսիվ բազմություն է: Սահմանենք

---

[1] Акопян Р.Ю. О процедурных семантиках строго типизированных функциональных программ. // Ученые записки ЕГУ, 2008, № 3, р. 59-69.

հետևյալ δ-ռեդուկցիայի գաղափարը, որին պատկանում են միայն հետևյալ զույգերը՝ կամայական $f \in C, f: M^k \to M, k \geq 1$ համար ունենք.

1. եթե $f(m_1, \ldots, m_k) = m$, որտեղ $m, m_1, \ldots, m_k \in M, m \neq \perp$, ապա $(f(\tau_1, \ldots, \tau_k), m) \in \delta$, որտեղ $\tau_i = m_i$, եթե $m_i \neq \perp$ և $\tau_i \equiv t_i$, $t_i \in \Lambda_M$, եթե $m_i = \perp$, $i = 1, \ldots, k, k \geq 1$,
2. եթե $f(m_1, \ldots, m_k) = \perp$, որտեղ $m_1, \ldots, m_k \in M$, ապա $(f(m_1, \ldots, m_k), \perp) \in \delta$:

[1]Աշխատանքից հետևում է, որ սահմանված δ-ռեդուկցիայի գաղափարը կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափար է, որը կանվանենք հիմնական կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափար:

Թեորեմ 2.1.1. Հիմնական կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի համար տեղի ունի հետևյալը.

$$\forall t \in \Lambda(t \to\to t', t \to\to t'', t', t'' \in NF \Rightarrow t' \equiv t''):$$

Նախքան Թեորեմ 2.1.1-ն ապացուցելը, տրվում է Սահմանում 2.1.2-ը և ապացուցվում Թեորեմ 2.1.2-ը:

Սահմանում 2.1.2. Կասենք, որ $\beta\delta$-ռեդուկցիայի գաղափարը օժտված է Չորչ-Ռոսսերի հատկությամբ, եթե կամայական $t \in \Lambda_\alpha, \alpha \in$ Types, թերմի համար տեղի ունի հետևյալը. եթե $t \to\to t_1$ և $t \to\to t_2$, որտեղ $t_1, t_2 \in \Lambda_\alpha$, ապա գոյություն ունի $t' \in \Lambda_\alpha$ թերմ այնպիսին, որ $t_1 \to\to t'$ և $t_2 \to\to t'$:

Թեորեմ 2.1.2. Հիմնական կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի դեպքում $\beta\delta$-ռեդուկցիայի գաղափարը օժտված է Չորչ-Ռոսսերի հատկությամբ:

Թեորեմ 2.1.2-ն ապացուցելու համար ապացուցվում են Լեմմա 2.1.1-ը և Լեմմա 2.1.2-ը:

Լեմմա 2.1.1. Դիցուք δ-ն հիմնական կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափար է և $t \in \Lambda_\alpha, \alpha \in Types$: Այդ դեպքում տեղի ունի հետևյալը. եթե $t \to t', t \to t'', t', t'' \in \Lambda_\alpha$, ապա գոյություն ունի $t''' \in \Lambda_\alpha$ թերմ այնպիսին, որ $t' \to\to t'''$ և $t'' \to\to t'''$:

Դիցուք $t \in \Lambda_\alpha, \alpha \in Types$ և $t \equiv t_1 \to \ldots \to t_n, n \geq 1$, որտեղ $t_i \in \Lambda_\alpha, i = 1, \ldots, n$, ապա $t_1, \ldots, t_n$ հաջորդականությունը կոչվում է t_n թերմի արտածում t թերմից, իսկ n-ը կոչվում է արտածման երկարություն:

Լեմմա 2.1.2. Կամայական $t \in \Lambda$ թերմից նորմալ ձևի արտածումների քանակը վերջավոր է:

Օգտվելով Թեորեմ 2.1.2-ից և կատարելով ինդուկտիվ ենթադրություն ապացուցվում է Թեորեմ 2.1.1-ը:

2.2 բաժնում ներմուծվում է տեղադրելիության և ժառանգականության հատկությունը (ՏԺ-հատկության) և ապացուցվում ՏԺ-հատկության՝ կանոնիկ δ-ռեդուկցիայի գաղափարի դեպքում տիպիզացված λ-թերմի նորմալ ձևի միակության համար, անհրաժեշտ և բավարար պայման լինելը:

